

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Քաշաթաղի տարածքային բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը հայտարարում է մրցույթ / 12-2.3-16/

Մրցույթը կկայանա 2012թ. հուլիսի 10-ին ժամը 15 00-ին

Դիմող ԼՂՀ քաղաքացիները սույն հայտարարության հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. գրավոր դիմում (տրվում է Հանձնաժողովի անունով, նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմող քաղաքացին) .
2. քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակների հետ միասին .
3. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին կամ համապատասխան տեղեկանք .
4. մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի .
5. անձնագրի պատճենը (առաջին և գրանցման էջերով) .
6. սոցիալական քարտի պատճենը .
7. արագակար:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցել ցանկացող ԼՂՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ (հեռ. 97-87-05): Մրցույթները կկայանան ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի շենքում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ , Մասունցի Դավիթ, 2):

08.06.2012 թ.